

դիմութիւն մանկանց սիրելի ազգին մերոց 'ի պիտանի եւ յօգտակար դիտութիւնս եւ աջակցութեամբ ուսուցիչ պրն. Յ. Օրբէլեանցին՝ ուսման եւ կրթութեան գործն համերաշխութեամբ կհասուցանէք իւր Սուրբ եւ Բարձր նպատակին :

Տէր Յովսէփ քհնյ. օրհնելով օրհնեցէ զՁեզ եւ ամենայն բարենպատակ ձեռնարկութեանց Ձերոց տացէ կատարեալ յաջողութիւն 'ի փառս ազգի եւ եկեղեցոյ մերոց եւ 'ի պարծանս բարեհամբաւ անուանց Ձերոց :

Առաջնորդ Վիճակին Հայոց Ատրպատականի Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան

Առաջնորդ Վիճակին  
Հայոց Ատրպատականի  
No. 183  
'ի 1 Նոյեմբերի 1886 ամի  
Դավրէժ

Մեծապատիւ հոգաբարձութեանն դպրոցին Հայոց Մարաղայի :

Արքայ ուսուցիչ, պրն. Յովհաննէս Օրբէլեանցի միջոցաւ ուղարկեցի առ հոգաբարձութեանդ 'ի գործադրութիւն երկու ժապաւինեալ մատեններն, զորս հարկէ յանձնել Ձեր անդամակից պրն. Մելքոն Խալափեանցին իրրեւ դանձապահի դպրոցին, որոց միոյն մէջ արձանագրել ազգասէր բարերարների եւ այցելուների թէ պայմանական եւ թէ կամաւոր նուէրներն, իսկ միւսոյ մէջ՝ դպրոցի տարեւորական եւ եւ մտից հաշիւներն :

Նմանապէս համաձայն գրաւոր խնդրանաց եւ յանձնարարութեանց Մեծապատիւ հոգաբարձութեանդ որոշեցի 'ի վարձ ուսուցչութեան պրն. Օրբէլեանցի 'ի տարին հարիւրօտան քուման, որից եւ ստանալով առանձնակի պայմանագիր՝ գրութեանս մէջ ներկայեալ՝ ահա առ Ձեզ ուղարկեցի :

«Թեմակալ Առաջնորդ Հայոց Ատրպատականի»  
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեանց

ՏԵՍԻԼՆԵՐԸ 5-ՐԻ ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Տեսիլ» բառի մեզ հետաքրքրող նշանակութիւնը Հայկազեան բառարանում բացատրուած է իրրեւ, «յայտնութիւն, երեւումն իրաց առ յԱստուծոյ, ցուցակութիւն, երազ ճշմարիտ, անուրջք ի քուն եւ երեւոյթ առ աչօք»<sup>1</sup> :

Տեսիլները ծագումն ու ձեւաւորումը կապուած է անտիկ դարաշրջանի հետ. դեռեւս յունական դիցաբանութեան մէջ առկայ են տեսիլների ստղմեր՝ կապուած կենդանի մարդկան՝ Հադէսի թագաւորութիւն այցելելու նկարագրութիւնների հետ : Յատկապէս շեշտում ենք այցելուների կենդանի լինելը, ի տարբերութիւն միջնադարեան տեսիլի մի տեսակի՝ «հանդերձեալ աշխարհի տեսիլի», որի համար գրեթէ անխուսափելի էր այդ աշխարհն այցելողի մահը եւ ապա յարութիւնն ի մեռելոց<sup>2</sup> :

Վաղ քրիստոնէութիւնը, ժառանգելով տեսիլն իրրեւ գաղափարական գէնք, որի միջոցով պէտք է «տիրէր մարդկան սրտերին ու երեւակայութեանը» (Հեղեղ), այն լայնօրէն օգտագործում է իր հայեացքների արծարծման ուրրտում՝ ծառայեցնելով դէրանք իր հիմքերն ամրապնդելու եւ դաւանարանական այլեւայլ խնդիրներ ներկայացնելու նպատակով : Այդ է ապացուցում ծանօթութիւնը Աստուածաշնչի Հին եւ Նոր կտակարանների հետ, որոնցում տեսիլներն ամենալայն կիրառութիւնն են ստացել :

Ինչ վերաբերում է «տեսիլի» որպէս գրական ինքնայատուկ տեսակի, անուանուման, ապա այն, միջնադարեան գրական այլ տեսակների՝ վարք, վկայաբանութիւն, ուղեգրութիւն, հրաշապատում եւ այլն, նման, համաձայն միջնադարեան գրական ընդունուած էտիկետի, ճշգրէն համընկնում է պատումի բուն առարկայի բովանդակութեան<sup>3</sup> :

<sup>1</sup> Տէս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, էջ 868, Երևան, 1981 :  
<sup>2</sup> Գուրբելի Ա. Յա., Միջնադարեան ժողովրդական մշակոյթի պրոբլեմներ, Մոսկուա, 1981, էջ 184 (ուսերէն) :  
<sup>3</sup> Լիխաչով Դ. Ս., Հին ուսական գրականութեան պոէտիկան, Մոսկուա, 1979, էջ 58 (ուսերէն) :

Տեսիլները բուն գաղափար են ապրում յատկապէս միջին դարերում՝ թէ՛ հայ, թէ՛ ռուս, թէ՛ լատինալեզու գրականութիւններում : Միջնադարեան լատինական գրականութեան մէջ տեսիլի առաջին նշումները հանդիպում են 6-րդ դարում՝ Գրիգոր Մեծի «Տրամախոսութիւնք» երկում, իսկ 9-րդ դարից սկսած տեսիլներն անջատուած են կամ դուրս են գալիս աստուածաբանաւորական տրակտատներից, վարքերից ու ժամական ստեղծագործութիւններից եւ առանձնանում իր նախադրութիւններից եւ առանձնանում իրրեւ ինքնուրոյն ստեղծագործութիւններ, հետագայում միաւորուելով ժողովածուների մէջ<sup>4</sup> : Հետաքրքիր է նաեւ, որ այդ նոյն 9-րդ դարում արդէն լատինական գրականութեան մէջ տեսիլը չափածոյի է վերածուած եւ 14-րդ դարակազմին իր բարձրագոյն արտահայտութիւնն է ստանում Դանթէի «Աստուածային կատակերգութեան» մէջ<sup>5</sup> :

Հայ մատենագրութեան սկզբնաւորումից ի վեր տեսիլները լայն տարածում են գտել տարբեր ստեղծագործութիւններում՝ պատմագրական երկերում, սրբախօսական գրականութեան՝ վարքերի ու վկայաբանութիւնների մէջ, քարոզներում, պարականոն յուշարձաններում եւ այլուր : Ինչո՞վ բացատրել տեսիլների նմանօրինակ լայն տարածումը : Դրա հիմնական նախադրեալները երկուսն են՝ միջնադարեան աշխարհայեացքն իր իւրայատուկութիւններով եւ տեսիլների գործնական նպատակադրումը, որոնց կանգնադրաւորանք քիչ յետոյ :

Չնայած տեսիլների այսպիսի լայն ընդգրկմանը եւ նրանց պարունակած բաւական հարուստ նիւթին, դրանք առ այսօր մեզանում յատուկ ուսումնասիրութեան չեն ենթարկուել : Տեսիլներին անդրադարձել են կամ դիպուածաբար՝ կապուած այլեւայլ նիւթերի ու պրոբլեմների ուսումնասիրութեան հետ, կամ էլ բանասիրական քննութեան են ենթարկուել առանձին տեսիլներ : Այսպէս, յիշատակելի են դեռեւս 1897 թ.

<sup>4</sup> Տէս Միջնադարեան լատինական գրականութեան յուշարձաններ, IV—IX դդ., Մոսկուա, 1970, էջ 221 (ուսերէն) :  
<sup>5</sup> Նոյն տեղը, էջ 332 :

Իմինի կողմից Մոսկուայում հրատարակած «Հայ հոգեւոր գրականութեան», վերաբերեալ յօդուածներն ու բնագրերի ուսուերէն թարգմանութիւնները, որոնք ուշագրաւ նիւթ են պարունակում տեսիլի բանասիրական-աղբիւրագիտական, ձեռագրագիտական, համեմատական քննութեան առումով: Ուղենշային են, մանաւանդ, գրքի առաջաբանի հեղինակի՝ Գր. Խալաթեանի դիտարկումները հնագոյն պարականոն մի տեսիլի՝ Աստուածամօր տեսիլի ծագման, յունական նախորինակի հետ առնչութեան, տարբեր խմբադրութիւնների, սլաւոնական համարժէքի մասին: Ուշագրաւ է յուշարձանի՝ այլ գրականութիւնների մէջ ներթափանցելու մի փաստի յիշատակումը, որի համաձայն Աստուածամօր տեսիլն աւելի ուշ՝ 16-րդ դարում լեհահայոց կողմից թարգմանուել է թաթարերէնի, որն, անշուշտ, վկայում է նրա ըայն տարածումը միջին դարերում: Մ. Իմինն անդրադառնում է նաեւ յայտնի «Սահակի տեսիլ» քննութեանը՝ բանասիրական մօտեցմամբ<sup>9</sup>:

Մ. Աբեղեանն իր «Հայ հին գրականութեան պատմութեան» մեզ հետաքրքրող հատուածում ամենեւին չի անդրադառնում տեսիլներին, բաւարարուելով Լուսաւորչի տեսիլի՝ իբրեւ Ազաթանգեղոսի «Պատմութեան» աղբիւրներից մէկի, սոսկ յիշատակութեամբ<sup>9</sup>:

Տեսիլների քննութեան մի ինքնատիպ հայեցակէտ է առաջադրում Աշոտ Յովհաննիսեանն իր «Հայ ազատագրական մտքի պատմութիւն» գրքում, արժեքաւորելով դրանք իբրեւ կարեւորագոյն սկզբնաղբիւրներ հայ քաղաքական մտքի ուսումնասիրութեան համար: Տեսիլների քննութիւնը, ըստ հեղինակի, մեծապէս կ'օժանդակի երեւան բերելու «հայ ժողովրդի քաղաքական բաղձանքների ու ակնկալութիւնների», «հայ ազատագրական տենչերի ու ոգորումների, բազմաթիւ նոր կողմեր՝ սկսած հեռու միջ-

նադարից եւ մինչեւ 18-րդ դարի սկզբները»<sup>10</sup>:

Տեսիլներին անդրադարձել են նաեւ գրականագէտներ Մ. Աւդալբեգեանը եւ Ք. Տէր-Դաւթեանը, ըստ որում Աւդալբեգեանը դրանք քննում է հայ գեղարուեստական արձակի սկզբնաւորման հարցի կապակցութեամբ, իսկ Տէր-Դաւթեանն անդրադառնում է տեսիլներին, որպէս սրբախօսական գրականութեան՝ վարքերի ու վկայաբանութիւնների, անբաժանելի մասի՝ հրաշքների ու սքանչելագործութիւնների հետ մէկտեղելով:

Այսպիսով, եղած նիւթը, թէեւ շատ արժեքաւոր, սակայն բաւարար չէ հայկական տեսիլների բանասիրական եւ գրականագիտական համակողմանի արժեքաւորման համար:

Այժմ անդրադառնանք տեսիլների տարածման նախապայմաններին: Դրանցից մէկըն, ինչպէս նշեցինք, միջնադարեան աշխարհայեացքն էր իր առանձնայատկութիւններով: Դեռեւս երկրորդ դարում հաւատը մտածողութիւնից դուրս էր համարում: «Հաւատում եմ, որովհետեւ անըմբռնելի է»-ասում էր Տերտուղիանոսը: Ինչպէս նրկատում է Հ. Էյկենը, «հէնց այն հանգամանքը, որ քրիստոնէական ուսմունքն այն ժամանակի մարդկան պէտք է անըմբռնելի թուար, այդ ուսմունքի գերբնականութեան լաւագոյն ասպացոյցն էր»<sup>12</sup>: Բացի այդ, միջնադարեան մարդու պատկերացմամբ երկրային եւ երկնային աշխարհների միջեւ սահմանը որոշ չափով ջնջուած էր, աւելի թափանցելի, որովհետեւ անտիկ դարաշրջանից յետոյ, ուր աստուածները, մարդիկ ու բընութիւնը միասնական էին հանդէս դալիս, միջնադարեան մարդու դիտակցութեան մէջ դեռեւս նոր էր տեղի ունեցել երկու աշխարհների որոշակի սահմանազատումը: Ուստի միջնադարեան «իրականութիւնը» (ռէալութիւնը) աւելի տարողունակ էր քան

<sup>9</sup> Մ. Էմին, Թարգմանութիւններ ու յօդուածներ Հայ հոգեւոր գրականութեան վերաբերեալ (1859-1882 թթ.), Մոսկուա, 1897 (ուսերէն):  
<sup>7</sup> Նոյն տեղը, էջ 8:  
<sup>8</sup> Նոյն տեղը, էջ 300-302:  
<sup>9</sup> Մ. Աբեղեան, Երկեր, Կ. Գ., էջ 183, Երեւան, 1968:

<sup>10</sup> Ա. Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, Կ. 1, էջ 15, Երեւան, 1957:  
<sup>11</sup> Մ. Աւդալբեգեան, Հայ գեղարուեստական արձակի ձեւաւորումը, Երեւան 1971. Ք. Տէր-Դաւթեան, XI-XV դդ. հայ վարքագրութիւնը, Երեւան, 1980:  
<sup>12</sup> Հ. Էյկեն, Միջնադարեան աշխարհայեցողութեան պատմութիւնն ու համակարգը, Պետերբուրգ, 1907, էջ 112 (ուսերէն):

նոր ժամանակներում<sup>13</sup>: Այդ պատճառով էլ տեսիլները ո'չ միայն պատրանքային, անիրական չէին համարում, այլեւ նրանցում փյայտ էր գալիս բարձրագոյն «իրականութիւնը»: Միջնադարի մարդը հաւատում էր տեսիլի իրական լինելուն, որովհետեւ նա իր էութեամբ տրամադրուած էր, հակուած էր տեսնելու եւ հաւատալու, որովհետեւ դրան հաւատում էր հանրութիւնը (կոլեկտիւ): Երբեմն տեսիլներում յատկապէս ընդգծուած է հէնց այդ կոլեկտիւայնութեան պահը, որպէսզի ընթերցողի կամ ունկնդրի մէջ եւս կասկած չառաջանայ տեսիլի իրական լինելու վերաբերեալ, քանի որ այն միաժամաւոր տեսիլ են շատերը, բազում մարդիկ, «զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, եւ ոչ առ յընկերէ պատմեալ» (Կորին):

Եթէ անտիկ դարաշրջանի հեղինակները ստեղծում էին երկեր՝ հաշուի չնստելով հասարակութեան հետ, ունէին մտածողուհասարակութեան հետ, ունէին մտածողութեան իրենց ուրոյն համակարգն ու ողին եւ թեան իրենց ուրոյն համակարգն ու ողին եւ պէտք է ինքնատիպ, օրիգինալ լինէին<sup>14</sup>, պէտք է ինքնատիպ, օրիգինալութեան այդ կանոնները խորթ էր օրիգինալութեան այդ հակումը, ընդհակառակն, միջնադարի մարհակումը, ընդհակառակն, միջնադարի մարհակումը, ընդհակառակն, միջնադարի մարհակումը էր դէպի դըն աւելի շուտ կողմնորոշում էր դէպի նախապէս ծանօթը, դէպի ստանդարտ հասկացողութիւններն ու կերպարները, որոնց միկացում էլ նա համոզում էր իր հաւատքի ջոցով էլ նա համոզում էր իր հաւատքի ու պատկերացումների ճշմարտացիութեան մէջ<sup>15</sup>:

Տեսիլների, որպէս գրական տեսակի, ձեւաւորման երկրորդ նախապայմանը եւ կարեւոր աղբիւրը նրանց գործնական-կիրական, բարոյոխրատական մեծ նշանակուական, բարոյոխրատական մեծ նշանակուական է: Տեսիլները, ինչպէս եւ միջնադարեան գրական ժանրերն առհասարակ, ունեցել են գործնական-կիրառական որոշակի դեր: Բանասիրութեան մէջ նկատուած շարժումները, որոնք հանրայայտ յատկանիշով էլ միջնադարեան գրական տեսակները տարբերում են նոր ժամանակների ժանրերից<sup>16</sup>:

Սակայն իրենց այս գործնական նշանակութիւնից զատ, տեսիլները հէնց սկզբից

ունեցել են նաեւ գեղագիտական արժանիքներ: Իբրեւ գեղարուեստական յօրինուածքներ, տեսիլներն իրենց գոյատեւման ընթացքում ձգտել են ինքնուրոյնացման, որին մեծապէս նպաստել են նրանցում գեղարուեստական տարրի աստիճանական զարգացումն ու ծաւալումը: Դրա շնորհիւ էլ, տեսիլները՝ կառուցուածքային կամ գեղարուեստական հնարանք լինելուց՝ վերածել են ինքնուրոյն գրական տեսակի:

Տեսիլների ծագման ակունքները, հիմնականում, անշուշտ, բանահիւսական են: Պատահական չէ, որ սրբախօսական գրական տեսակներում տեսիլները յատկապէս բնորոշ են այսպէս կոչուած «ժողովրդական ուղղութեան» վարքերին<sup>17</sup>, իսկ լատինական գրականութեան տեսիլները (դրանց մի տեսակը՝ հանդերձեալ աշխարհի տեսիլները) քննուել են միջնադարեան ժողովրդական մտածողութեան տեսանկիւնով<sup>18</sup>: Տեսիլների բանահիւսական ակունքներն է մատնանշում, մեր կարծիքով, նաեւ այն փաստը, որ շատ տեսիլներ ընթերցողի կողմից ընկալուած են իբրեւ գեղարուեստական աւարտուն, ամբողջական ստեղծագործութիւններ, իբրեւ գեղեցիկ նովել կամ պատմուածք, որը չի կարելի բացատրել միայն տեսիլը ներկայացնող հեղինակի բարձր գեղարուեստական ունակութիւններով: Դա վկայում է, որ տեսիլները, մինչեւ գրի առնուելը, բանաւոր զարգացման երկար ուղի են անցել: Ուշագրաւ է նաեւ մի այլ փաստ. Խորենացու «Պատմութեան» մէջ տեղ է գտել բովանդակութեամբ նախաքրիստոնէական մի տեսիլ՝ Աժդահակի տեսիլը կամ երազը<sup>19</sup>, որը, մեր կարծիքով, չէր կարող ինքը՝ Խորենացին յօրինած լինել: Իսկ քանի որ Մ. Աբեղեանի գիտումով «Տիգրանի (եւ Աժդահակի) վէպը բուն պատմական յիշողութիւնների հետ ունի նաեւ առասպելական, յատկապէս ամպրոպի վիշապի առասպելի բնաւորութիւն»՝ Աժդահակ-վիշապ նշանակութիւնը, ապա այստեղ կարելի է տեսնել նաեւ Աժդահակի երազի առասպելական-ժողովրդական ծագումը:

<sup>13</sup> Տե՛ս Գուրբելի Ա., նշվ. աշխ., էջ 205:  
<sup>14</sup> Հեղեւի, Էսթետիկա, Կ. 4, էջ 11, Մոսկուա, 1973 (ուսերէն):  
<sup>15</sup> Տե՛ս Գուրբելի Ա., նշվ. աշխ., էջ 208, Լիխայով, նշվ. աշխ., էջ 89:  
<sup>16</sup> Գ. Լիխայով, նշվ. աշխ., էջ 65-79:

<sup>17</sup> Տե՛ս Ք. Տէր-Դաւթեան, XI-XV դդ. հայ վարքագրութիւնը, էջ 171:  
<sup>18</sup> Ա. Գուրբելի, նշվ. աշխ.:  
<sup>19</sup> Մ. Խորենացի, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1843, էջ 51:



